ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/08» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 02-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/08 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ. համաձայնագրով նախատեսվել է դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում»:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 8.5, 8.14 կետեր:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ОБЪЯВЛЕНИЕ

об изменениях, внесенных в заключенный договор

Судебный департамент ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 12 декабря 2019 года в договор № DD-GHAShDzB-19/08, заключенный 02 декабря 2019 года в результате процедуры закупки под кодом DD-GHAShDzB-19/08 организованной с целью приобретения текущих ремонтных работ зданий и строений для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.
Причина возникновения изменения: Контракт был заключен на основании части 6 статьи 15 Закона РА «О закупках», предусмотренны финансовые средстба для выполнение работ, предусмотренных контрактом.

Описание изменения: Приложение N 3 договора, под заглавием <ГРАФИК ПЛАТЕЖЕЙ> утвержден в новой редакции, по соглашению предусмотрено положение со следующим содержанием:<Условия настоящего соглашения и договора применяются по отношению к фактически возникшим между сторонами отношениям после заключения Договора до заключения соглашения на его основе. При этом, после заключения Договора до заключения соглашения на его основе оплата за выполненную Откупщиком работу осуществляется в случае учета настоящего соглашения, Договора министерством финансов РА>.

Обоснование изменения: Статьи 8.5, 8.14 Контракта.

Заказчик: **Судебный департамент**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

02.12.2019թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/08» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 12 » դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտշին-1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Դավթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 02.12.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/08» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«Արտշին- 1» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք.Երևան, Կարապետյան փ. 9
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 11811006695800
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01277633
ՀՀ ֆինանսական վարչություն	«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ
Ղեկավար Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Դավթյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	

Հավելված N 1
« 12 » դեկտեմբերի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
«02» դեկտեմբերի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/08» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/526	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Աջափնյակ նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ	5 900 000	**5 900 000**
2	45461100/528	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արաբկիր նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ	3 850 000	**3 850 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/Ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Արտշին- 1» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Կարապետյան փ. 9
Հ/Հ՝ 11811006695800
ՀՎՀՀ՝ 01277633
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Դավթյան

/Ստորագրություն/
Կ.Տ